ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ

0025, Երևան, Նալբանդյան 130, ընդունարան հեռ.՝ 59 66 59, քարտուղարություն հեռ.՝ 59 61 25

№ 13/3243 « 17 » 07 2019 թ.

Ձեր

«Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպություն նախագահ պարոն ԿԱՐԵՆ ՋԱԴՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Զադոյան

ՀՀ ոստիկանության 2020-2022 թթ. ՄԺԾ ծրագրի հայտի և 2020 թ.-ի բյուջեի նախագծի քննարկման արդյունքներով Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի և Հանրային խորհրդի պետահիրավական հանձնաժողովի կողմից պատրաստված դիտողությունների և առաջարկությունների կապակցությամբ, ըստ կատարված առաջարկությունների հաջորդականության, հայտնում եմ հետևյալը.

Առաջարկություն 1.1. Լրամշակվել և 27.06.2019 թ.-ին ներկայացվել է մեթոդական ցուցումների պահանջներին համապատասխանող մեկ միասնական հայտ:

Առաջարկություն 1.2. Ոստիկանության ռազմավարական նպատակները հստակեցվել և կապվել են ՀՀ կառավարության ծրագրի <<2.2 ՆԵՐՔԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ>> բաժնում ներառված հիմնական ուղենիշների հետ:

Նկատի ունենալով, որ ՀՀ կառավարության 2019 թ.-ի մայիսի 16-ի № 650-Ն որոշման № 1 հավելվածով հաստատված ՀՀ կառավարության 2019-2023 թվականների գործունեության ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկը ոստիկանության հայտում ներառված է.

- ցանկի 55.1 կետով նախատեսված՝ տեսաձայնագրող սարքերով կահավորված նույնատիպ հարցաքննության սենյակների ստեղծման, ինչպես նաև ՁՊՎ-ների մուտքերը, միջանցքները, հերթապահ մասերը տեսաձայնագրող սարքերով կահավորման ծախսերը՝ **153.6 մլն. դրամ գումարով** (առաջիկա 2 տարում իրականացնելու դեպքում, տարեկան 76.8 մլն. դրամ).

- 371.1 կետով նախատեսված՝ տուգանային (ոչ նյութական) միավորների ավտոմատ հաշվարկման համակարգի, ինչպես նաև էլեկտրոնային եղանակով տրանսպորտային միջոցների հաշվառման գործողություն կատարելու համար անհրաժեշտ տեխնիկական

միջոցների ձեռքբերման՝ 1.135.500,0. հազ. դրամ գնահատված արժեքով ծախսերի ֆինանսավորման աղբյուր է հանդիսանալու ՃՈ ընթացիկ տարվա արտաբյուջետային միջոցների այսօրվա դրությամբ առկա մնացորդը.

- 372 կետով նախատեսվող պարեկային ծառայության ենթակառուցվածքի՝ օպերատիվ կառավարման կենտրոնի ձևավորման, տեխնիկական վերազինման, ռադիոկապի համակարգի արդիականացման, պարեկային տրանսպորտային միջոցների ձեռքբերման և կահավորման, պարեկային ոստիկանության ծառայողների համար նախատեսված անհատական պաշտպանության միջոցների և նոր մոդելի հրազենի ձեռքբերման ծախսերը, ինչպես նշված է միջոցառումների ցանկում իրականացվելու է վարկային, դրամաշնորհային ծրագրերով ներգրավվող միջոցների հաշվին (արդեն իսկ ընթացքում է Համաշխարհային բանկի միջոցների հաշվին օպերատիվ կառավարման կենտրոնի ձևավորման մրցույթային գործընթացը:

<u>Առաջարկություն 1.3.</u> Ոստիկանության ռազմավարական նպատակները և թիրախները սահմանելիս ղեկավարվել ենք նաև ՀՀ վարչապետի 2019 թ.-ի հունիսի 1-ի № 666-Լ որոշմամբ հաստատված հավելվածով սահմանված ճանապարհային քարտեզի մաս 3-ով նախատեսվող միջոցառումներով (24-ժամյա շրջիկ պարեկային ծառայության և օպերատիվ կառավարման համակարգի ստեղծում, վարորդական վկայականների տրամադրման ընթացակարգերի բարելավում և այլն):

<u>Առաջարկություն 1.4.</u> Նշվել է ոստիկանության կողմից բյուջետային ծրագրերի շրջանակներում իրականացվող այն հիմնական միջոցառումները, որոնք ուղղված են գերակա վերջնական արդյունքների ապահովմանը:

<u>Միջոցառումներ և արդյունքային ցուցանիշներ. կետ 2.</u>

«Ոստիկանության ոլորտում զարգացման հիմնական գերակայությունները» բաժնում նկարագրված ռազմավարական նպատակները և բյուջետային ծրագրերի համար սահմանված վերջնական արդյունքային ցուցանիշները գտնվում են տրամաբանական կապի մեջ, մասնավորապես.

- «քաղաքացի-ոստիկանություն համագործացության նոր մշակույթի ձևավորման ու ամրապնդման, քաղաքացիների հետ հարաբերվելու մշակույթի բարձրացման, կոռուպցիայի բացառման, ինչպես նաև ոստիկանության գործունեության նկատմամբ հանրային վերահսկողության ապահովման» նպատակների համար, բյուջետային ծրագրերի 1158՝ «Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումներ, մոնիտորինգ և վերահսկողություն» ծրագրում, որպես վերջնական արդյունքի ցուցանիշ նշված է «Հասարական վստահության մակարդակի աճը՝ 60%», քանի որ հասարակական վստահության մակարդակի բարձրացումը ամփոփ կերպով վկայում է վերը նշված նպատակների իրականացման մասին, և արտահայտվում թվային ցուցանիշի տեսքով:

- «Հանրային կյանքում քրեածին մտածելակերպի բացառումը» նպատակի համար, որպես վերջնական արդյունք նախատեսված է «Հասարակական անվտանգության ապահովում» 1014 ծրագրում ներառված՝ «Բացահայտված հանցագործությունների մակարդակի աճը՝ 10%» և «Առավել լատենտային հանցագործությունների, (կոռուպցիոն բնույթի հանցագործություններ, թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց

պրեկուրսորների ապօրինի շրջանառության և մարդու թրաֆիկինգի կամ շահագործման դեպքերի) հայտնաբերման մակարդակի աճը 11%» ցուցանիշները:

Հանցագործությունների հայտնաբերման և բացահայտման գործընթացքում էական նշանակություն ունի քաղաքացիական հասարակության բարձր իրավագիտակցության հանգամանքը, և քրեածին մտածելակերպի կրճատումն ինքնին աջակցություն է հանցավորության դեմ պայքարում (բացահայտում «տաք հետքերով», հանցավորության լատենտայնության կրճատում և այլն), և հանգեցնում է հանցագործությունների հայտնաբերման և բացահայտման դինամիկ աճին:

- «Հանրային անվտանգության ապահովման հարցում քաղաքացիների իրավագիտակցության մակարդակի բարձրացումը» նպատակի համար, որպես թիրախային ցուցանիշ նախատեսված է 1175՝ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովում» ծրագրում որպես վերջնական արդյունք նշված է «Ծանր հետևանքներով ճանապարհատրանսպորտային պատահարների (3 և ավելի զոհ և/կամ 10 և ավելի վիրավոր) քանակի 22%-ով նվազումը»:

Քաղաքացիների իրավագիտակցության մակարդակի բարձրացումը, ի թիվս այլ իրավախախտումների, կհանգեցնի նաև ՃՏՊ-ների կրճատմանը, որոնք հասարակական անվտանգության դեմ ուղղված առավել թիրախային խախտումներ են: Հատկապես զոհերով կամ վիրավորներով տեղի ունեցող ՃՏՊ-ների պատճառ հանդիսանում են ոչ սթափ վիճակում վարվող, արագությունը գերազանցող, հետիոտնի կողմից չնախատեսված վայրով փողոցն անցնելու խախտումները, որոնց կանխարգելման համար առանցքային նշանակություն ունի բարձր իրավագիտակցություն ունեցող հասարակությունը:

Սահմանվել է Հավելված 3-ի Մաս 3-ում ծրագրերի վերջնական արդյունքների համար ելակետային ժամկետները (կցվում է):

Հայտնում եմ նաև, որ ՀՀ կառավարության ս/թ հուլիսի 10-ի արտահերթ նիստում հաստատվել է ՀՀ կառավարության 2020-2022 թթ. ՄԺԾԾ հայտի սահմանաչափերը, որով ոստիկանության հատկացումները նախատեսվել է ընթացիկ տարվա չափերով: Այժմ աշխատանքներ են իրականացվում 27.06.2019 թ.-ին Ձեզ ներկայացված հայտով նախատեսված հատկացումները շուրջ 3.0 մլրդ. դրամի չափով կրճատելու և հաստատված սահմանաչափերին համապատասխանությունն ապահովելու համար:

Ամփոփելով, ցանկանում եմ շնորհակալություն հայտնել ոստիկանության ծրագրային բյուջետավորման գործընթացին Ձեր գործուն մասնակցության արդյունքում այն միանաշանակ բարելավող նկատառումների և առաջարկությունների համար:

Հարգանքով և հետագա համագործակցության ակնկալիքով՝

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ
ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ՝ ՎԱԼԵՐԻՅ ՕՍԻՊՅԱՆ

Հավելված N 3. Բյուջետային ծրագրերի և ակնկալվող արդյունքների ներկայացման ձևաչափ

Պետական մարմնի գերատեսչական դասիչը՝	*105019*
Պետական մարմնի անվանումը՝	*Հայաստանի Հանրապետության ոստիկանություն*

ՄԱՍ 3 ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԳԾՈՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Դասիչը	Ծրագիրը	Ծրագրի վերջնական արդյունքները				
		Չափորոշիչը	Ելակետը		Թիրախը	
			Ցուցանիշը	Ժամկետը	Ցուցանիշը	Ժամկետը
1158	*Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումներ, մոնիտորինգ և վերահսկողություն*	*Հասարակական վստահության մակարդակի աճ, տոկոս*	*30*	*2011թ.*	*60*	*2020թ.*
1014	*Հասարակական անվտանգության ապահովում*	*բացահայտված հանցագործությունների մակարդակի աճ, տոկոս*	*5*	*2017թ.*	*10*	*2020թ.*
		Առավել լատենտային հանցագործությունների (կոռուպցիոն բնույթի հանցագործություններ, թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուսորների ապօրինի շրջանառության և մարդու թրաֆիկինգի կամ շահագործման դեպքերի) հայտնաբերման մակարդակի աճ, տոկոս	*7*	*2017թ.*	*11*	*2020թ.*
1175	*Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովում*	*Ծանր հետևանքներով ճանապարհատրանսպորտային պատահարների (3 և ավելի զոհ և/կամ 10 և ավելի վիրավոր) քանակի նվազում, տոկոս*	*10*	*2016թ.*	*12*	*2020թ.*

1083	Անձնագրերի և վիզաների տրամադրում, բնակչության պետական ռեգիստրի միասնական համակարգի վարում	Մեկ պատուհանի սկզբունքի լիարժեք կիրառման նպատակով նոր բիոմետրիկ համակարգի ներդրմամբ անձնագրային ստորաբաժանումներում սպասարկման կետերի ավելցում, հատ	75	2018թ.	185	2021թ.
1101	Ոստիկանության կրթական ծառայություններ	Բակալավրիատի կրթական ծրագրով շրջանավարտների թիվ, տոկոս	69.1	2018թ.	96.4	2022թ.
		Միջին մասնագիտական կրթական ծրագրով շրջանավարտների թիվ, տոկոս	80.8	2018թ.	99.2	2022թ.
		Նախնական մասնագիտական կրթական ծրագրով շրջանավարտների թիվ, տոկոս	100	2018թ.	150	2022թ.
1095	Ոստիկանության աշխատողների և նրանց ընտանիքի անդամների առողջության պահպանում	Ծառայողների (անձանց) աշխատունակության ժամանակավոր կորստով ուղեկցվող հիվանդությունների դեպքերի կրճատում, տոկոս	3	2018թ.	5	2020թ.